

ուեստագէտներ զրկել Եւրոպա . իսկ երկրի բարգաւաճման համար մեքենագրութիւն սովորողներ՝ որ Վանի ծովի վրայ առագաստանաւերու տեղ կանոնաւոր նաւեր չլինէին , որ իրարու հետ կարողանային կապուիլ և շուտով հաղորդակցիլ ծովին յրջակայ քաղաքներն ու գիւղերը :

Պէտիր-խան պէյի համար քաղաքական իշխանութիւնը լինելով միայն բարձրագոյն նպատակակէտ , իրեն համար հաւասար կը նկատէր Հայ ու Քիւրդ լինելը , հիմնուած լինելով այն առարկութեան վրայ՝ համոզուած կամ անհամոզ՝ որ իրենք մէկ արիւնէ առաջ եկած սերունդներ են՝ բաժանուած ցեղերով ու կրօնով . ձուլումն ինչ վախճան ալ ունենար , պիտի կազմէր իրեն համար քաղաքականապէս զօրեղ ու պատերազմիկ ազգ մը , որովհետև իրեն համար նշանակութիւն չունէր առանձնակի ազգ ու կրօն :

Այս բացարձակ վտանգաւոր և անկարելի ծրագիրը գործադրութեան դնել կ'աշխատէր , ի հարկէ հիմնուած միայն բռնի ուժի վրայ , առանց ի նկատի ունենալու Հայ ժողովուրդի տրամադրութիւնը՝ որ ոչ միայն չէր ուզեր կորսնցնել իր ինքնուրոյնութիւնը , այլև պէտք ունէր հանգստի ու խաղաղ բարգաւաճման , և երբէք չէր դիմեր նման վտանգաւոր և անորոշ քայլերու , ստոր համար էր երբ Օսմանեան բանակը Հայաստան մտաւ , ժողովուրդը դիմեց Օսմանեան բանակին , անոր միացաւ , անոր հետ կուռեցաւ ու կալանաւորելով Պէտիր-խան պէյը յանձնեց Օսմ . իշխանութեանը :

## ՇԵՐՆԱԽ ԵՒ ԴԸԸ

(Իրիի գաղթականութիւնը . Պոհսանի քրդական նուաճումը  
Շերնախի աղայի կողմէն՝ Օսմ . կառավարութեան յետոյ .

Շէյխ-Սապասուլլահը (Շէյխ ձեղաթէսիի հայրը) .

Պէտիր-խան պէյը նուաճեր էր և Պոհսանի մօտիկ Շերնախը . անոր աքսորուելէն յետոյ կուժովայ Շերնախի աղան